

պի Հսպէշիստան կատարած արդիւնաւոր ճամբորդութիւններու ընթացքին (1772—1773), թէև ասիկա կասկածի տակ ձգուած ըլլայ, վասնզի անգլիացի ուղեգիր Ջ.՝ W. G. Brown իր *Travels in Africa, Egypt and Syria, from the years 1792 to 1798*, London, 1806, գործին յառաջաբանին մէջ, ի Սուէզ 1793ին Հսպէշիստան ուղարկած ժամանակակից և ականատես հայ վաճառականէ մը առած տեղեկութեանց վրայ հիմնուելով, կը հերքէ Bruceի նեղոսի աղբերակունքը գտնուած ըլլալը: Հայը աւելցուցած էր, թէ Bruce նշանակուած էր կառավարիչ Ռաս-էլ-Ֆիլի, նահանգ մը, ուր արաբներն կը խօսուէին (տես Յ. Քիւրտեան. Հայ-րեւելիք, ԺԸ. տարի թ. 12, էջ 166):

Ուրեմն, պէտք է պատուով յիշատակենք, թէ այս եւրոպացի խուզարկունքներէն առաջ Յովհաննէս արքեպիսկոպոս Թիւթիւնճի արգէն այցելած էր Կապոյտ նեղոսի ակերը, ինչպէս կը հաստատէ նաև Աբբա լը Մասգրիէ (Mr. l'Abbé Le Mascrier. «Description de l'Egypte, composée sur les notes de M. de Maillet. Consul de France. Paris, 1735» Պ. Յ. Նալբանդեան իր Հայերը եւ եթովպիա յօդուածաշարքին մէջ (հրատարակուած «Արեւ»-ի մէջ, Փետր. 1935ին), օգտուելով Աբբա լը Մասգրիէի հետաքրքրական հատորէն, կը գրէ:

«Ճիշտ այս դէպքերը պատահած շրջանին(1) կամ անկէ քիչ առաջ խիստ հետաքրքրական յիշատակութեան մը կը հանդիպինք. եթովպիոյ արեւունիքը, կայսեր հրա-

(1) Ուսիմնն ԺԷ. դարուն վերջերը եւ ԺԸ. դարուն սկիզբը, երբ Ֆրանսա դիւանագիտական յարաբերութեան մեկնել կը ջանար Հսպէշիստանի հետ: